

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 39, ՄԱՍ 1**

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի  
Կառավարման խորհրդի 2009թ. ապրիլի 17-ին ժամը 15:00-ին ՀՀ Կառավարության  
նիստերի դահլիճում կայացած հերթական նիստի առաջին մասի

**Նիստը նախագահում էր.**

ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի  
Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը

**Մասնակցում էին՝**

**Կառավարման խորհրդի անդամներ.**

Արմեն Գևորգյանը	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Արամայիս Գրիգորյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Տիգրան Դավթյանը	ՀՀ ֆինանսների նախարար
Մուշեղ Թումասյանը	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Հրանտ Բեգլարյանը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ
Վիկտոր Ենգիբարյանը	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ-ի նախագահ
Արման Ոսկանյանը	«Տավուշի զարգացման» ՀԿ-ի ներկայացուցիչ
Շիրակ Միքայելյանը	«Աշխատանք և հայրենիք» ՀԿ-ի լիազոր ներկայացուցիչ
Պողոս Շահինյանը	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ-ի նախագահ
Սյուզաննա Սողոմոնյանը	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ Կարեն Զադոյանի փոխարինող/լիազոր ներկայացուցիչ

**Կառավարման խորհրդի դիտորդ.**

Ալեքս Ռասինը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն
--------------	--

**Նիստից բացակայում էին.**

Վահրամ Ներսիսյանցը	ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի
--------------------	---

	փոխնախագահ
Ներսես Երիցյանը	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Գուրգեն Սարգսյանը	ՀՀ տրանսպորտի նախարար
Կարեն Զադոյանը	«Հայաստանի Երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Ռուբեն Խաչատրյանը	«Հայաստանում վայրի բնության և մշակութային արժեքների պահպանության» հիմնադրամի տնօրեն, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի բնապահպանական դիտորդ
<b>Նիստին հրավիրված էին.</b>	
Անդրանիկ Անդրեասյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ
Դավիթ Սարգսյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
<b>Նիստին մասնակցում էին նաև.</b>	
Արա Հովսեփյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Նորա Մարտիրոսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, կառավարման խորհրդի քարտուղար
Հակոբ Պետրոսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի ղեկավար
Տիգրան Քալանթարյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի ոռոգման ծրագրի ղեկավար
Ֆրենսիս Ռեիդը	ՀՄԿ փոխտնօրենի տեղակալ
Սիմոն Ղոնաղչյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ
Հովհաննես Սահակյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Մարինա Քուլչբյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի արձանագրային բաժնի աշխատակից
Յուրի Ջավադյանը	«Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրեն
Վարուժան Հովսեփյանը	«Հայգուղշիննախագիծ» ՍՊԸ-ի տնօրեն
Արմեն Ավագյանը	«Զրտուք» ՍՊԸ-ի տնօրեն

Էդիկ Մեսրոպյանը	«Ջինջ» ՍՊԸ-ի տնօրեն
Մելս Պետրոսյանը	«Ջրարբի» ՍՊԸ-ի տնօրեն
Հարություն Հակոբյանը	«Երրորդ կարգի ջրանցքների նախագծում և շինարարության վերահսկում» պայմանագրի շրջանակներում ծրագրի ղեկավար
Հայկ Մաթևոսյանը	«ՇՄՇ-23» ԲԲԸ-ի տնօրեն
Ֆրենսիս Մարքիեն	«Սադե» ընկերության հայաստանյան մասնաճյուղի ղեկավար
Խաչատուր Ադունյանը	Թարգմանիչ
Կարինե Դավթյանը	Թարգմանիչ

Նիստը բացեց ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը:

**Նիստի օրակարգում ներկայացված էին հետևյալ հարցերը.**

1. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ջրից դեպի Շուկա բաղադրիչի վարկային ենթաբաղադրիչի շրջանակներում հավատարմագրված բանկերի և վարկային կազմակերպությունների ցուցակի քննարկում և հաստատում:
2. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի աուդիտի իրականացման պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում:
3. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի գնումների վերանայված պլանի քննարկում և հաստատում:
4. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում մրցութային փաթեթներ պատրաստելու համար միջազգային փորձագետի ներգրավման պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում:
5. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում Վեց մայր ջրանցքների շինարարական աշխատանքների (Առաջին փաթեթ) իրականացման համար կնքված պայմանագրի փոփոխության նախագծի քննարկում և հաստատում:
6. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում Երրորդ կարգի ջրանցքների նախագծման և շինարարության վերահսկողության համար կնքված պայմանագրի փոփոխության նախագծի քննարկում և հաստատում:
7. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի իրականացման ներկա ընթացքի մասին տեղեկատվության ներկայացում:

8. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնում ենթածրագրի իրականացման ներկա ընթացքի մասին տեղեկատվության ներկայացում:

9. Այլ հարցեր:

Օրակարգի վերաբերյալ Արա Յովսեփյանը հայտնեց, որ օրակարգի երկրորդ հարցով ներկայացված աուդիտի պայմանագրի վերաբերյալ հաղթող ընկերության հետ բանակցություններն առայժմ չեն հանգեցրել որևէ վերջնական արդյունքի, ուստի անհրաժեշտ է այն հանել օրակարգի հարցերի շարքից: Բացի այդ առավել նպատակահարմար է 7-րդ հարցը քննարկել որպես երկրորդ հարց, քանի որ մյուս հարցերը հանդիսանում են այս հարցի տրամաբանական շարունակությունը:

Ներկայացված մոտեցումը ընդունվեց և օրակարգը հաստատվեց միաձայն:

Օրակարգին կից ՀԱՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից կառավարման խորհրդի անդամներին ներկայացվել էր նաև յուրաքանչյուր հարցի վերաբերյալ համապատասխան տեղեկանք՝ կից փաստաթղթերով:

**Նիստի ընթացքում.**

**Օրակարգի 1-ին հարցը** ներկայացրեց ՀԱՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Յովսեփյանը:

Արա Յովսեփյանը ներկայացրեց, որ ՀԱՀ-Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ջրից դեպի Շուկա բաղադրիչի շրջանակներում վարկավորման համար դիմած բանկերի և վարկային կազմակերպությունների ցանկի վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկը տվել է իր դրական եզրակացությունը, նշելով, որ վերջիններս գործում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիաների շրջանակներում:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հարցրեց, թե արդյո՞ք բոլոր դիմող կազմակերպություններն են հավատարմագրվել:

Արա Յովսեփյանը հաստատեց այդ հանգամանքը:

Արման Ոսկանյանը խնդրեց պարզաբանել, թե ո՞րն է լինելու վարկավորման առավելագույն տոկոսը:

Արա Յովսեփյանը պատասխանեց, որ առավելագույնը 12%-ն է:

Քննարկումներից հետո **միաձայն /10 կողմ ձայնով**, քանի որ Պողոս Շահինյանը տվյալ հարցի քվեարկությանը չմասնակցեց/**որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ջրից դեպի Շուկա բաղադրիչի վարկային ենթաբաղադրիչի շրջանակներում հավատարմագրված բանկերի և վարկային կազմակերպությունների ցուցակը:

**Որպես օրակարգի 2-րդ հարց օրակարգի 7-րդ հարցը** ներկայացրեց ՀԱՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Յովսեփյանը:

Արա Յովսեփյանը հայտնեց, որ Կառավարման խորհրդի տվյալ նիստին ներկա են նաև ՀԱՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում ներգրավված խորհրդատվական և շինարարական ընկերությունների ներկայացուցիչները: Վերջիններիս ներկայության հիմնական պատճառն այն է, որ ՀԱԿ-ն ընդհանուր առմամբ բավարարված չէ տեղական խորհրդատուների կատարած աշխատանքով: Մասնավորապես՝ առաջարկված տեխնիկական լուծումները հիմնականում չեն համապատասխանում առաջադեմ միջազգային փորձին և բավականին թանկ են, մինչդեռ տեղական խորհրդատվական/նախագծող ընկերությունները ոչ միշտ են ընդունում ՀԱԿ-ի

փաստարկները՝ հիմնավորելով, որ համոզված չեն, որ առաջարկվող լուծումները կիրառելի են Հայաստանի Հանրապետության աշխարհագրական և բնակլիմայական պայմաններում:

Արա Հովսեփյանը ներկայացրեց ՀԱՀ-Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի ներկայիս վիճակը: Նշվեց, որ վեց մայր ջրանցքների շինարարության առաջին փաթեթով նախատեսված շինարարական աշխատանքների առաջին մասն ավարտվել է, ամբողջովին վերականգնվել է մոտ 800 մ երկարությամբ մայր ջրանցքի հատվածը, կառուցվել և վերականգնվել են ջրի կառավարման և հիդրոտեխնիկական մի քանի կառուցվածքներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սկսվում է ոռոգման շրջանը՝ աշխատանքները մայր ջրանցքում դադարեցվել են մինչև ոռոգման սեզոնի ավարտը, սակայն կշարունակվեն ջրի կառավարման կառուցվածքների վրա կատարվող աշխատանքները: Այս աշխատանքների իրականացման գործում մասնագիտական խորհրդատվության համար ներգրավվել են մի շարք միջազգային խորհրդատուներ, մասնավորապես ջրի կառավարման, բետոնի և նստվածքների հեռացման գծով՝ միջազգային առաջադեմ փորձը ներկայացնելու համար:

Մինչև 2009թ. հուլիս ամիս նախատեսվում է պատրաստել նաև 6 մայր ջրանցքների շինարարության երկրորդ փաթեթի մրցութային փաստաթղթերը և հայտարարել մրցույթ:

Արա Հովսեփյանը ներկայացրեց նաև ՀԱՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում ընդգրկված ինքնահոս համակարգերի վերաբերյալ առկա տեղեկատվությունը: Մասնավորապես նշվեց, որ ՀԱԿ-ի կողմից խնդրահարույց է համարվում Սպիտակի ինքնահոս համակարգի կառուցման հարցը, քանի որ խողովակաշարը նախատեսվում է կառուցել ռելիեֆային բարդ պայմաններում՝ խորը կիրճով, գետի հունի տակ: Սակայն ՀԱՀ-Հայաստան ՊՈԱԿ-ն առաջարկել է հարցի լուծման հետևյալ տարբերակը. հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սպիտակի ջրագիծը միայն ամբողջական կառուցման դեպքում կարող է գործարկվել՝ համակարգն առաջարկվում է ներկայացնել մրցույթի առանձին լոտով: Ընդ որում ընտրված շինարարը պետք է ներկայացնի շինարարության ամբողջ արժեքի բանկային երաշխիք: Երաշխիքային գումարը կվերադարձվի ՀԱՀ-Հայաստանին շինարարությունը ժամկետներում (մինչև 2011թ. սեպտեմբեր) չավարտելու պարագայում:

Պոմպակայանների վերաբերյալ Արա Հովսեփյանը հայտնեց, որ այս բաղադրիչում առկա են էական խնդիրներ, քանի որ ՀԱԿ-ն առաջարկում է վերանայել և կրճատել այս մասով ծրագիրը և 17-ի փոխարեն ծրագրում թողնել ավելի քիչ թվով պոմպակայաններ: Որպես կրճատման հիմնական պատճառ ՀԱԿ-ն ներկայացնում է ժամկետում աշխատանքներն ավարտելու խնդիրը: Սակայն ՀԱՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը այս հարցի վերաբերյալ ևս ներկայացրել է լուծման տարբերակ, մասնավորապես՝ աշխատանքները ժամկետում և ամբողջությամբ իրականացնելու նպատակով 17 պոմպակայաններն առաջարկվում է ըստ առաջնահերթության բաժանել 3 փաթեթների՝ 8, 5 և 4 օբյեկտներ ամեն մեկում: Ընտրված կապալառուից աշխատանքները կպահանջվեն հաջորդաբար՝ ըստ նախնական պայմանավորվածության և աշխատանքային պլանի: Աշխատանքների ոչ բարենպաստ ընթացքի դեպքում կդադարեցվեն երրորդ, իսկ անհրաժեշտության դեպքում նաև երկրորդ փաթեթի աշխատանքները: ՀԱՀ-Հայաստանը համարում է այս տարբերակը հիմնական ռիսկերի մեղմացման լավագույն լուծում, սակայն վերջինս առայժմ ՀԱԿ-ի համար ընդունելի չէ:

Արա Հովսեփյանն ավելացրեց նաև, որ երրորդ կարգի ջրանցքների նախագծման առաջին փաթեթում ընդգրկված նախագծերն արդեն ավարտականացվել են և շուտով կներկայացվեն ՀԱԿ-ին: Այս գործընթացում իր ուրույն դերն է ունեցել միջազգային փորձագետ Իշրաթ Խանը (WYG, Մեծ Բրիտանիա): Ըստ էության վերջինիս ներգրավումը էական է այս բաղադրիչի իրականացման համար: Սակայն համաձայն առկա պայմանագրի նախատեսվում է, որ վերջինս ամբողջ պայմանագրի գործողության (երեք տարի) ընթացքում պետք է ներգրավվի ընդամենը երկու ամիս, մինչդեռ ՀԱԿ-ի և ՀԱՀ-Հայաստանի, ինչպես նաև ապրիլի 10-ին ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար պարոն Արմեն Գևորգյանի մոտ կայացած քննարկման ընթացքում հաստատվեց այն փաստը, որ միջազգային խորհրդատուի ներգրավվածությունը պետք է միանշանակ ավելացնել: Ընդ որում վերջինիս մասնակցությունը

պետք է ավելանա նվազագույնը 6 ամսով: Ավելացման ծախսերի մի մասը՝ 40%-ը ընկերությունը պատրաստ է վերցնել իր վրա, մինչդեռ 60%-ի ֆինանսավորումը պետք է կատարվի ՀԱՀ-Հայաստան ծրագրի բյուջեից: Այս հարցի վերաբերյալ տեղեկատվությունը մանրամասն ներկայացված է օրակարգի 6-րդ հարցով:

Արա Հովսեփյանը նաև նշեց, որ ենթակառուցվածք բաղադրիչի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը մանրամասն ներկայացված է տրամադրված տեղեկանքում:

ՀՀ Վարչապետը հարցրեց, թե ընդհանուր առմամբ ենթակառուցվածք բաղադրիչի համար նախատեսված գումարն որքա՞ն է:

Արա Հովսեփյանը պատասխանեց, որ ընդհանուր բաղադրիչի համար նախատեսված գումարը 108 մլն. ԱՄՆ դոլար է, որից շինարարական աշխատանքներինը՝ 97 մլն.:

Արմեն Գևորգյանը հավաստեց, որ 2009թ. ապրիլի 10-ին իր մոտ կայացել է ՀԱՀ-Հայաստան ծրագրի վերաբերյալ քննարկում, որի արդյունքում ձևավորվել է այն կարծիքը, որ խնդիրը միայն տեղացի նախագծողները չեն: Ըստ էության վերջիններս աշխատում են իրենց ամբողջ պոտենցիալով: Շատ դեպքերում ՀԱԿ-ի կողմից առաջարկվում են լուծումներ, որոնք Հայաստանում առ այսօր չեն կիրառվել և հետևաբար ոչ մի նախագծող իր վրա պատասխանատվություն չի վերցնի ասելու, թե հայկական պայմաններում այդ լուծումները կիրառելի են, թե՛ ոչ, և որքանով արդյունավետ կլինեն: Փաստորեն առկա է հիմնականում պատասխանատվության խնդիր, մասնավորապես նախագծողների համար: Օրինակ՝ մինչև մայիսի 15-ը բետոնի միջազգային փորձագետը պետք է կարծիք տա, թե մայր ջրանցքի երեսպատման համար տեխնոլոգիաները ընդունելի են և ՀՀ-ում կիրառելի են թե՛ ոչ: Ընդ որում այդ մասով ներկայումս կատարվում են փորձնական աշխատանքներ և կիրառվում են մի շարք տեխնիկական լուծումներ:

Ինչ վերաբերում է երրորդ կարգի ջրանցքներին, ապա ՀԱԿ-ի մասնագետների կողմից առաջարկվող տեխնոլոգիաները էժան են և նոտեցումներն ընդունելի, օրինակ՝ հողային ջրանցքների կառուցման առաջարկը: Սակայն Հայաստանում կան հողեր, որ որքան էլ ջուր լցվի, միևնույն է հողը այն կլանում է, հետևաբար այդ մասում միակ լուծումն ամբողջությամբ բետոնե երրորդ կարգի ջրանցքների կառուցումն է, օրինակ՝ Արմավիրի մարզի որոշ գոտիներում: Փաստորեն յուրաքանչյուր առանձին դեպքում պետք է յուրահատուկ լուծում առաջարկել:

Տեղական նախագծողների մասով հիմնական խնդիրը կայանում է նրանում, որ հայաստանյան նախագծողները չեն կարողանում իրենց կատարած աշխատանքը համապատասխան հանրամատչելի ձևով ներկայացնել և այս մասով միջազգային փորձագետի դերը մեծ է:

Միաժամանակ Արմեն Գևորգյանը համոզվում էր հայտնեց, որ եթե բոլոր կողմերը ցանկություն ունենան և աշխատանքի կազմակերպումը ճիշտ կատարվի, ապա բոլոր նախատեսված ծրագրերը ժամանակին կավարտվեն: Հիմնական խնդիրը հենց նրանում է, որ բոլորը չափից ավել ներգրավվածություն են ուզում ունենալ բոլոր հարցերում, ինչը և հանգեցնում է հավելյալ խոչընդոտների:

Պողոս Շահինյանը հայտնեց, որ 2007թ.-ից ի վեր ծրագրի տեխնիկական հարցերի վերաբերյալ անընդմեջ քննարկումներ են գնում, սակայն բարձրացվող հարցերին վերջնական լուծում չի տրվում: Նա ներկա գտնվող նախագծող կազմակերպությունների ղեկավարներին հարցրեց, թե ունեն արդյո՞ք վերջիններս այլ միջազգային կազմակերպությունների հետ աշխատանքի փորձ և եթե այո, ապա ինչպիսի՞ն է վերջիններիս արձագանքը:

Յուրի Ջավադյանը հայտնեց, որ իրենց կազմակերպությունը Համաշխարհային Բանկի հետ աշխատանքի մոտ 20 տարվա փորձ ունի և ներկայումս էլ համատեղ ծրագրերը շարունակվում են: Այդ ծրագրերի շրջանակներում Հայջրնախագիծ ինստիտուտը նախագծել է մի շարք ջրամբարներ, երրորդ կարգի և մայր ջրանցքներ, ինքնահոս համակարգեր և այլն: Այդ

նախագծերի վերաբերյալ երբևէ բացասական կարծիք չի եղել և աշխատանքը կրկին անելու հարց երբևէ չի բարձրացվել: Միաժամանակ նշվեց, որ ընդհանուր առմամբ դրական է ՀՄԿ-ի կողմից նոր տեխնոլոգիաների և լուծումների կիրառման հարցի բարձրացումը, սակայն այդ լուծումները պետք է քաղաքաշինական նորմերի տեսանկյունից ընդունելի լինեն, քանի որ տեխնիկական փորձաքննությունը կատարվում է հենց այդ առկա նորմերի հիման վրա:

Վարուժան Հովասափյանը բարձր գնահատեց ՀՄՀ-Հայաստանի հետ համատեղ աշխատանքը և կարևորեց սերտ շփումները: Սակայն նատնանշեց, որ նախագծող կազմակերպություններն առկա օրենքի կիրառողն են և եթե նախագծողը ցանկանում է որևէ նոր տեխնոլոգիա կիրառի, քան այն ինչ սահմանված է քաղաքաշինական նորմերով, ապա նախապես պետք է լուրջ ուսումնասիրություն կատարվի համապատասխան գիտահետազոտական ինստիտուտների կողմից: Անհրաժեշտ է որպեսզի պետությունը պարբերաբար վերանայի այդ նորմերը, որպեսզի հնարավորություն ընձեռնվի կիրառելու այդ նոր տեխնոլոգիաները, քանի որ ներկայումս այդ տեխնոլոգիաները ՀՀ-ում կիրառելու համար որևէ իրավական հիմք չկա:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հետաքրքրվեց, թե արդյո՞ք Հայաստանում կան այդպիսի գիտահետազոտական ինստիտուտներ և որոնք են դրանք:

Վարուժան Հովասափյանը պատասխանեց որ կան և նշեց մի քանի օրինակ՝ ՀՀ շինարարության գիտահետազոտական ինստիտուտը, քարի և սիլիկատների ինստիտուտը և այլն: Միաժամանակ ավելացվեց, որ օրինակ Սպիտակի ինքնահոս համակարգի նախագծման ժամանակ փորձ է արվել նոր մոտեցում ցուցաբերել, որի համար ուսումնասիրվել է գետի հունը և առաջարկել է համակարգի մի մասն անցկացնել գետի հունով:

Արա Հովսեփյանը Վարուժան Հովասափյանին հարցրեց, թե որքանո՞վ է նա, որպես նախագծի հեղինակ, համարում Սպիտակի ինքնահոս համակարգի կառուցումը ռիսկային:

Վարուժան Հովասափյանը հայտնեց, որ չնայած այն հանգամանքին, որ այս ինքնահոս համակարգի կառուցումը ՀՄԿ-ն համարում է բարձր ռիսկային, սակայն Հայգյուղշիննախագիծ ընկերությունը, տեսնելով հանդերձ որոշակի ռիսկ, այն չի համարում բարձր ռիսկայնության ծրագիր և գտնում է իրականացումը նախատեսված ժամկետում իրատեսական:

Արա Հովսեփյանը նշեց, որ այս ինքնահոս համակարգի կառուցման համար շինարարական կազմակերպություններից պահանջվելու է պայմանագրի արժեքի 100% չափով բանկային երաշխիք, որը բնականաբար կարող է սահմանափակել մասնակից ընկերությունների շրջանակը:

Արմեն Գևորգյանը հարցրեց, թե արդյո՞ք ՀՀ-ում կան այնպիսի կազմակերպություններ, որոնք զուտ տեխնիկապես ի վիճակի են իրականացնելու այս ծրագիրը:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ համաձայն ՀՄՀ-Հայաստանի տեխնիկական անձնակազմի ուսումնասիրությունների ՀՀ-ում այդպիսի ընկերություններ առկա են:

Անդրանիկ Անդրեասյանը նշեց, որ արդեն ծրագրի երրորդ տարին է, դեռևս գործում է ընդամենը մեկ շինարարական կազմակերպություն, սակայն ծրագիրն արդեն համարվում է ռիսկային: Ծրագիրն արդեն մեկ անգամ կրճատվել է և ներկայումս կրկին կրճատման հարց է առաջացել: Որպես հիմնավորում ՀՄԿ-ի կողմից բերվում է շինարարության ժամկետների հնարավոր ձգձգումը: Ներկայումս ՀՀ կառավարությունը բանակցություններ է վարում տարբեր աղբյուրներից հավելյալ գումարներ ոռոգման ոլորտ ներգրավելու համար: Ակնհայտ է, որ ՀՄՀ-Հայաստան ծրագրում ներառված են ամենաառաջնահերթ համարվող ծրագրերը, և եթե ստացվի այնպես, որ ծրագրից հավելյալ ծավալներ դուրս մնան, ապա կառավարությունը առաջնահերթ ծրագրերը թողնելով, փաստորեն ֆինանսավորում է ավելի քիչ հրատապություն ունեցող ծրագրերը: Ինչ վերաբերում է շինարարական նորմերին, ապա ՀՀ-ում գործող շինարարական նորմերը սահմանափակող չեն, քանի որ վերջիններս ամրագրված են գերատեսչական ակտով և կարող են փոփոխվել: Այս ամենի արդյունքում կարելի է գալ մեկ

եզրահանգման. անհրաժեշտ է գտնել շտապ լուծումներ, քանի որ յուրաքանչյուր հավելյալ ամիս ձգձգումը ծրագիրն իրոք դարձնում է ռիսկային:

Արա Յովսեփյանը համաձայնվեց Անդրանիկ Անդրեասյանի հետ՝ նշելով, որ ներկայումս բեկումնային պահ է ծրագրի համար, և եթե կողմերն համախմբված մեկ թիմի նման չաշխատեն, ապա ամբողջ ծրագիրը կդրվի հարցականի տակ: Դրա համար ՀԱՀ-Հայաստանի մոտեցումն է ծրագրի հիմնական բաղադրիչներով մրցույթի շուտափույթ մեկնարկը:

Արմեն Գևորգյանը նշեց, որ ծրագրում անհրաժեշտ են այնպիսի լուծումներ, որոնք հնարավորություն կընձեռեն առնվազն 15-20 տարի գերծ մնալ այս նույն խնդիրներին անդրադառնալուց, այսինքն անհրաժեշտ է ապահովել երկարաժամկետ արդյունք, որին հնարավոր կլինի հասնել բացառապես համախմբված աշխատանքի արդյունքում:

Հարություն Հակոբյանը հայտնեց, որ իրենք նախագծում են երրորդ կարգի ջրանցքները, որը բավականին բարդ աշխատանք է, քանի որ բացի տեխնիկական խնդիրներից առկա են նաև սոցիալական և բնապահպանական հարցեր: Ինչ վերաբերում է միջազգային մասնագետներին, ապա վերջիններս առաջարկում են էժան լուծումներ, որը հնարավորություն կտա ավելի մեծ ծավալի աշխատանք կատարել, մինչդեռ տեղական խորհրդատուներն առաջարկում են շեշտը դնել ավելի թանկ, բայց երկարաժամկետ լուծումների վրա:

ՀՀ Վարչապետն առաջարկեց անցնել տեղեկանքում ներկայացված յուրաքանչյուր ռիսկով և տալ վերջիններիս լուծում:

Մայր ջրանցքների մասով տեղեկանքում ներկայացված էր այն փաստը, որ քանի դեռ հին քայքայված երեսապատումից չեն մաքրվել ջրանցքի հատվածները լիարժեք հնարավոր չէ կանխատեսել ողջ ծավալի և տեսակի աշխատանքները: Արդյունքում շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում ծագում են հավելյալ աշխատանքներ ինչը ժամանակատար է և ազդում է իրականացման տեմպերի վրա:

ՀՀ Վարչապետը նշեց, որ յուրաքանչյուր շինարարական պայմանագրում առկա է լինում չնախատեսված ծախսերի ֆինանսավորման համար նախատեսված գումար: Ուստի այդ լրացուցիչ ծավալների համար վճարումները կկատարվեն այդ միջոցներից, իսկ բոլոր այն ծախսերը, որոնք կգերազանցեն այդ գումարը, կառավարությունը կվերցնի իր վրա և կֆինանսավորի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից: Ինչ վերաբերում է այն հարցին, որ շինարարական աշխատանքների մեկնարկի ժամանակ ջրանցքում առկա է եղել չկարգավորվող ջուր, որը հիմնականում առաջացել է ձնհալքից և կոյուղաջրերից, ապա այս ռիսկն ըստ մասնագետների եզրակացության շատ հեշտ է չեզոքացնել, ջրի հոսքը կանխելով ավազով լի պարկերի օգնությամբ: Մայր ջրանցքների տարբեր կտրվածքներում առկա ինքնակամ կառուցված ջրթողների հետ կապված հարցերը ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը ևս պատրաստակամություն հայտնեց լուծելու ՀՀ կառավարության միջոցով:

Արա Յովսեփյանն ավելացրեց, որ բացի ներկայացված ռիսկերից, երբեմն ծագում են նաև լրացուցիչ խնդիրներ, որոնց լուծումը դուրս է ՀԱՀ-Հայաստանի իրավասությունների շրջանակներից, օրինակ՝ ներկրվող ապրանքների և սարքավորումների դեպքում երբեմն ձգձգվում է մաքսագերծման գործընթացը, ինչն ազդում է ծրագրի իրականացման ժամկետների վրա:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ կընդունվի ՀՀ կառավարության որոշում, որով կստեղծվի համապատասխան ժամանակավոր մարմին՝ ՀԱՀ-Հայաստան ծրագրի հետ կապված ցանկացած խնդրի օպերատիվ լուծման համար, որը կգտնվի ՀՀ Վարչապետի անմիջական վերահսկողության ներքո:

Վեց մայր ջրանցքների երկրորդ փաթեթի շինարարական նախագծերի վերաբերյալ Յուրի Ջավադյանը հայտնեց, որ այն օրը երբ իրենց կողմից կստացվի բետոնի միջազգային

փորձագետի վերջնական եզրակացությունը կիրառվող տեխնոլոգիաների վերաբերյալ, նույն օրը աշխատանքները կմեկնարկեն և Հայջրնախագիծ ինստիտուտը նախատեսված ժամկետում, այն է՝ մինչև 2009թ. հունիսի 20-ը կտրամադրի 6 մայր ջրանցքների երկրորդ փաթեթի վերջնական նախագծերը:

Յուրի Ջավադյանն անդրադարձավ նաև Մեղրու ինքնահոս համակարգին, որը ՀՄԿ-ի կողմից ևս մատնանշվել է որպես ռիսկային և նշեց, որ այս մասով ընդհանրապես որևէ ռիսկ չի տեսնում, քանի որ տեղացի շինարարները մեծ փորձ ունեն բարդ ռելիեֆային գոտիներում կարճ ժամկետում երկար խողովակաշար անցկացնելու գործում, օրինակ՝ գազամուղները, այն դեպքում երբ ջրատարն ավելի հեշտ աշխատանք է հանդիսանում, քան գազատարը:

ՀՀ Վարչապետը հարցրեց, թե տեղեկանքում որպես բարձր ռիսկային նշված Սպիտակի ինքնահոս համակարգն, եթե իրոք ռիսկային է, ինչու՞ է ի սկզբանե ծրագրում ներառվել:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ այն ռիսկային է համարվում միայն ծրագրի ժամկետի սահմանափակ լինելու հետևանքով:

Անդրադառնալով պոմպակայանների հարցին, ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ այս մասով ՀՄԿ-ի կասկածները փարատելու համար անհրաժեշտ է պայմանագրում ամրագրել խիստ պատժամիջոցներ ուշացումների համար, այդ թվում նաև նախատեսել բանկային երաշխիքի տրամադրման անհրաժեշտություն, և եթե շինարարական ընկերությունները չդիմեն, ապա պարզ կդառնա, որ ծրագիրն իրոք ռիսկային է, իսկ եթե ոչ՝ ապա ակնհայտ կլինի, որ այդ ռիսկերը բացակայում են և ծրագիրը կիրականացվի ամբողջ ծավալով: ՀՀ Վարչապետը միանշանակ անընդունելի համարեց ծրագիրը ևս մեկ անգամ վերանայելու կամ կրճատելու ՀՄԿ-ի կողմից բարձրացված հարցը: ՀՀ Վարչապետի դիրքորոշումն է մրցույթը շարունակել մեկ լոտով և ծրագիրը փորձել իրականացնել ամբողջությամբ:

Հաջորդ հարցը վերաբերում էր երրորդ կարգի ջրանցքներին: Այս մասին ՀՀ Վարչապետը հայտնեց, որ ներկայացված տեղեկանքում նշված է, որ երրորդ կարգի ջրանցքների շինարարության լուծումները բավականին թանկ են, սակայն դա պայմանավորված է տեղ-տեղ լեռնային գոտիներում ոռոգման համակարգի կառուցման առանձնահատկությամբ: Ինչ վերաբերում է այն բացատրական աշխատանքներին, որոնք պետք է անցկացնել համայնքների հետ, ապա այս մասով պատասխանատվությունը ՀՀ կառավարությունն անհրաժեշտության դեպքում նույնպես կվերցնի իր վրա:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանն առաջարկեց վերոնշյալ բոլոր լուծումներն ամրագրել և ուղարկել ՀՄԿ:

Քննարկումների արդյունքում **միաձայն որոշվեց՝** ընդունել ի գիտություն «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի իրականացման ներկա ընթացքի մասին ներկայացված տեղեկատվությունը և հանձնարարել ՀՄԿ-Հայաստան ՊՈԱԿ-ին ՀՄԿ-ին ներկայացնել առաջարկված լուծումներն ու ռիսկերի չեզոքացման մեխանիզմները:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ օրակարգի 3-ից 6-րդ հարցերն էլնում են ներկայացված տեղեկատվությունից և ուղղված են ենթակառուցվածքներ բաղադրիչի իրականացմանը, բացի այդ յուրաքանչյուր հարցի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ՀՄԿ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվել է կառավարման խորհրդի անդամներին համապատասխան տեղեկանքով:

**Միաձայն որոշվեց՝** հաստատել ա/ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի գնումների վերանայված պլանը, բ/ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում մրցութային փաթեթներ պատրաստելու համար միջազգային փորձագետի ներգրավման պայմանագրի նախագիծը, գ/ «Հազարամյակի

մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում Վեց մայր ջրանցքների շինարարական աշխատանքների (Առաջին փաթեթ) իրականացման համար կնքված պայմանագրի փոփոխության նախագիծը և դ/ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում Երրորդ կարգի ջրանցքների նախագծման և շինարարության վերահսկողության համար կնքված պայմանագրի փոփոխության նախագիծը:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանն առաջարկեց նիստն ընդհատել և չքննարկված հարցերին անդրադառնալ մեկ շաբաթ անց:

Նիստն ընդմիջվեց և համաձայնություն ձեռք բերվեց այն շարունակել մեկ շաբաթ անց:

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»  
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,  
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝  
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու,  
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի քարտուղար  
Ն. Մարտիրոսյանը